ՑԿԾ-ի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

2009թ. Մաս II: Ենթածրագրեր ու գործողություններ

ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ..... 3
Որո՞նք են նպատակները..... 3
ԿՈՄԵՆԻՈՒՍ..... 4
Որո՞նք են նպատակները..... 4
Ո՞վքեր կարող են մասնակցել.....4
Կոմենիուսն օժանդակում է հետևյալ գործողությունները.....5
Որո՞նք են ԿՈՄԵՆԻՈՒՍԻ գործողությունները..... 9
ԷՐԱՍՄՈՒՍ.....10
Որո՞նք են նպատակները.....10
Ո՞վքեր կարող են մասնակցել.....10
Գործողության ի՞նչպիսի տեսակներ.....10
Որո՞նք են ԷՐԱՍՄՈՒՍ գործողությունները.....12
ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ.....13
Որո՞նք են նպատակները.....13
Ո՞վքեր կարող են մասնակցել.....13
Գործողության ի՞նչպիսի տեսակներ.....14
Որո՞նք են ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ գործողությունները.....14
ԳՐՈՒՆԴՎԻԳ.....14
Որո՞նք են նպատակները.....16
Ո՞վքեր կարող են մասնակցել.....16
Գործողության ի՞նչպիսի տեսակներ.....17
Որո՞նք են ԳՐՈՒՆԴՎԻԳ գործողությունները.....17
ՏՐԱՆՍՎԵՐՍԱԼ ծրագիր 18
Որո՞նք են նպատակները.....18
ՑԿՅԱՆՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ (ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1).....19
Գործողության ի՞նչպիսի տեսակներ.....21
Որո՞նք են Ցկյանս կրթության ոլորտում քաղաքականության վերաբերյալ համագործակցության ու նորարարության գործողությունները..... 21
ԼԵԶՈՒՆԵՐ (ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2)..... 21
Որո՞նք են լեզվի հետ կապված գործողությունները.....21
ՑԿՅԱՆՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԵԹՈԴՆԵՐԻ ՈՒ ՓՈՐՁԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ (ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3) 22

Գործողության ի՞նչպիսի տեսակներ.....22
Որո՞նք են ՏՏ գործողությունները.....22
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒՄԸ, ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ (ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4).....23

Որո՞նք են նպատակները.....23
Գործողության ի՞նչպիսի տեսակներ..... 23
Ինչպե՞ս են ԳԳ4-ի ներքո իրականացվող գործողությունները համապատասխանում հրապարակման ու կիրառման գործողություններին, որոնք իրականացվում են մեկ այլ տեղ՝ ՑԿԾ-ի սահմաններում.....23
Որո՞նք են հրապարակման ու կիրառման գործողությունները..... 24
ԺԱՆ ՄՈՆԵ ԾՐԱԳԻՐ 25
Որո՞նք են նպատակները..... 25
Ո՞վքեր կարող են մասնակցել..... 25
Գործողության ի՞նչպիսի տեսակներ.....25
Որո՞նք են Ժան Մոնե գործողությունները.....26

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Որո՞նք են նպատակները

(ա) **«Կոմենիուս»** ծրագիրն ուղղված է նախադպրոցականից մինչև դպրոցական ավագ դասարանների կրթության մեջ բոլոր ներգրավվածների դասավանդման և ուսուցման, ինչպես նաև նման կրթություն ապահովող հաստատությունների ու կազմակերպությունների կարիքների բավարարմանը:

(բ) **«Էրազմուս»** ծրագիրն ուղղված է բարձրագույն և մասնագիտական ֆորմալ կրթության ու ուսուցման մեջ ընդգրկված՝ անկախ դասընթացների տևողությունից և որակավորումից, այդ թվում դոկտորական դասընթացներում բոլոր ներգրավված դասավանդողների ու սովորողների, ինչպես նաև նման կրթություն և ուսուցում ապահովող կամ խթանող հաստատությունների ու կազմակերպությունների կարիքների բավարարմանը:

(գ) **«Լեոնարդո դա Վինչի»** ծրագիրն ուղղված է մասնագիտական կրթության և ուսուցման մեջ, բացի բարձրագույն կրթությունից, բոլոր ներգրավված դասավանդողների ու սովորողների, ինչպես նաև նման կրթություն և ուսուցում ապահովող կամ խթանող հաստատությունների ու կազմակերպությունների կարիքների բավարարմանը:

(դ) **«Գրունդվիգ»** ծրագիրն ուղղված է մեծահասակների ոչ մասնագիտական կրթության բոլոր տեսակներում՝ ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ (ներունակ), ներգրավված դասավանդողների ու սովորողների, ինչպես նաև նման կրթական հնարավորություններ ընձեռող կամ խթանող հաստատությունների և կազմակերպությունների կարիքների բավարարմանը:

Այս չորս ծրագրերի գործողությունները կարող են նախապատրաստվել **Նախապատրաստական այցերի** միջոցով:

ԿՈՄԵՆԻՈՒՍ

Որո՞նք են նպատակները

Առանձնահատուկ հիմնախնդիրները

- Զարգացնել երիտասարդների ու կրթական անձնակազմի՝ եվրոպական մշակույթների և լեզուների բազմազանության ու դրա նշանակության վերաբերյալ պատկերացումներն ու գիտելիքները.
- Օգնել երիտասարդներին ձեռք բերել կյանքի այն հիմնական հմտությունները և ու ունակությունները, որոնք անհրաժեշտ են նրանց անհատական զարգացման, հետագա զբաղվածության ու Եվրոպայի ակտիվ քաղաքացի լինելու համար:

Գործառնական հիմնախնդիրներ

- Բարելավել տարբեր անդամ երկրների աշակերտների և կրթական անձնակազմի շարժունության որակն ու ծավալը.
- Բարելավել տարբեր անդամ երկրների դպրոցների միջև գործընկերությունների որակն ու ավելացնել դրանց ծավալը, որպեսզի ծրագրի իրականացման ժամանակահատվածում առնվազն 3 միլիոն աշակերտներ ներգրավվեն կրթական համատեղ գործողություններում.
- Խթանել օտար լեզուների ժամանակակից ուսումնասիրումը.
- Խթանել ցկյանս կրթության ոլորտում նորարարական տեղեկատվական ու համակարգչային տեխնոլոգիաների վրա հիմնված բովանդակության, ծառայությունների, դասավանդման մեթոդների և գործնական կիրառման զարգացումը.
- Ամրապնդել ուսուցիչների վերապատրաստման որակն ու կարևորությունը Եվրոպայում.
- Խթանել բարեփոխումները մանկավարժական մոտեցումներում ու դպրոցական կառավարման ոլորտում.

Ո՞վքեր կարող են մասնակցել

Ըստ էության, դպրոցական կրթության մեջ բոլոր ներգրավվածները.

- Միջնակարգ դպրոցի բոլոր աշակերտները.
- Անդամ պետությունների դպրոցները՝ նախադպրոցականից մինչև միջնակարգ դպրոցի ավագ դասարանների ավարտը.
- Այդ դպրոցների ուսուցիչներն ու անձնակազմի այլ խմբեր.
- Միությունները, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություններն ու դպրոցական կրթության մեջ ներգրավվածների ներկայացուցիչները.
- Տեղական, տարածաշրջանային ու ազգային մակարդակներում կրթության կազմակերպման և ապահովման համար պատասխանատու անձինք ու մարմինները.
- Ցկյանս կրթության հարցերով զբաղվող հետազոտական կենտրոններն ու մարմինները.
- Բարձրագույն ուսումնական հաստատությունները.
- Կողմնորոշման, խորհրդատվական ու տեղեկատվական ծառայությունները.

Թույլատրելիության առանձնահատուկ կանոններ.

«Կոմենիուս» ծրագրին մասնակցող դպրոցները պետք է գտնվեն ՑԿԾ-ին մասնակցող երկրում և ընդգրկված լինեն համապատասխան ազգային պատասխանատուների կողմից սահմանված դպրոցների թույլատրելի տեսակների ցանկում.

(հասցեն. http://ec.europa.eu/education/programmes/llp/comenius/school_en.html)

Խնդրում ենք հաշվի առնել ներքոհիշյալ առանձնահատուկ հանգամանքները.
1) Դպրոցները, որոնք ենթարկվում են մեկ այլ երկրի ազգային պատասխանատուներին (օրինակ՝ «lycꝛe franꝛais»-ը, Գերմանական դպրոցը, ՄԹ «Ուժերը» դպրոցները): Տվյալ դպրոցի վարչական, ֆինանսական ու ուսումնական պլանների վերահսկողության ազգային պատասխանատուներն են որոշելու, թե որ հաստատություններն ունեն մասնակցելու իրավունք: Սկզբունքը վերաբերում է գործառնական հետևյալ դրույթներին.

- Մեկ այլ երկրում գտնվող «ազգային դպրոցների» մասնակցությունը կօժանդակվի վերահսկող երկրի «Կոմենիուս» բյուջեով:
- Այդ ազգային դպրոցները կարող են մասնակցել ցանկացած «Կոմենիուս» գործողությանը՝ ենթարկվելով նույն կանոններին, ինչ վերահսկող երկրի ցանկացած իրավասու դպրոց:

2) Մասնագիտացված դպրոցներ. «Կոմենիուս» ազգային այլ դպրոցների, ինչպիսիք են՝ փոքրամասնությունների դպրոցների, արտագաղթածների համար մասնավոր դպրոցների և այլն, մասնակցության վերաբերյալ որոշում կարող են կայացնել այն երկրի ազգային պատասխանատուները, որտեղ գտնվում է տվյալ հաստատությունը:
3) Եվրոպական դպրոցներ. Եվրոպական դպրոցներն ուսումնական պաշտոնական հաստատություններ են, որոնք համատեղ կառավարվում են Եվրոպական Միության անդամ պետությունների կառավարությունների կողմից: Եվրոպական դպրոցները «Կոմենիուս» ծրագրի մասնակցության իրավունք ունեցող հաստատություններ են: Դրանք կարող են դիմել այն երկրի Ազգային պատասխանատուին, որտեղ գտնվում են և կենթարկվեն ընտրության նույն ընթացակարգին, ինչ տեղական դպրոցները: Բելգիայի պարագայում, Ազգային երեք պատասխանատուներ պետք է համաձայնության գան համապատասխան քայլերի առնչությամբ: Եվրոպական դպրոցները ենթարկվում են «Կոմենիուս»-ի նույն կանոններին, ինչ այն երկրի ցանկացած այլ իրավասու դպրոց, որտեղ դրանք գտնվում են: Սակայն Եվրոպական դպրոցների մասնակցությունը, որպես համակարգողի կամ գործընկերոջ, կսահմանափակվի յուրաքանչյուր Գործընկերության մեջ մեկ Եվրոպական դպրոցով: Եվրոպական դպրոցների անձնակազմն իրավունք ունի մասնակցել «Կոմենիուս»-ի ներքո կազմակերպվող որակավորումը բարձրացնող դասընթացներին նույն պայմաններով, ինչ մեկ այլ իրավասու դպրոցի անձնակազմ:

«Կոմենիուսն» օժանդակում է հետևյալ գործողություններին.

Հետևյալ գործողություններն օժանդակվում են «Կոմենիուս» ծրագրի կողմից.
Մեկ այլ եվրոպական երկիր անհատների շարժունությունը, որը կարող է ներառել.

- ծրագրի կամ գործընկերության համատեքստում աշակերտների ու անձնակազմի փոխանակումներ,
- ուսուցիչների և կրթական մնացած անձնակազմի մասնակցությունը վերապատրաստումներին,
- դպրոցների գործընկերությունների, ցանցերի ու բազմակողմ ծրագրերի նախապատրաստական այցերը,
- աջակցություն ապագա ուսուցիչներին:
- Եվրոպական տարբեր երկրների **դպրոցների գործընկերությունները,** որոնց նպատակն է՝ մշակել կրթական համատեղ ծրագրեր աշակերտների ու նրանց ուսուցիչների համար:
- Տեղական ու տարածաշրջանային պատասխանատուների միջև **«Կոմենիուս Ռեժիո Գործընկերություններ»**, որոնք որոշակի դերակատարություն ունեն դպրոցական կրթության ոլորտում: Դրանց նպատակն է՝ բարելավել դպրոցական տարիքի երեխաների համար կրթական հնարավորությունները՝ եվրոպական տարբեր տարածաշրջաններում դպրոցական կրթության պատասխանատուների, դպրոցների ու կրթություն ապահովողների միջև համագործակցությանն աջակցելու միջոցով:

- էլեկտրոնային **Թվիննինգ** նախաձեռնությունն օգտագործում է ինտերնետի ու թվային միջոցների հնարավորությունները՝ եվրոպական դպրոցական համագործակցությունը, համագործակցությամբ սովորելը և ծրագրի վրա հիմնված դասավանդման մեթոդները խթանելու նպատակով:

- **Բազմակողմ ծրագրերի նպատակն է՝** մշակել, խթանել ու հրապարակել ուսումնական նոր պլանները, ուսուցիչների վերապատրաստման նոր դասընթացները կամ նյութեր, դասավանդման նոր մեթոդները, ինչպես նաև ստեղծել ուսանող ուսուցիչների շարժունության կազմակերպման շրջանակ:

- **Բազմակողմ ցանցերի** նպատակն է՝ խթանել եվրոպական համատեքստում դպրոցական կրթության համար հատուկ կարևորության թեմատիկ ոլորտներում եվրոպական համագործակցությունն ու նորարարությունը:

- Լրացուցիչ միջոցառումների նպատակն է՝ աջակցել տարբեր գործողությունների, որոնք ակնհայտորեն կնպաստեն «Կոմենիուս» ծրագրի հիմնախնդիրների լուծմանը:

Որո՞նք են «ԿՈՄԵՆԻՈՒՍ» գործողությունները

- ԿՈՄԵՆԻՈՒՍ նախապատրաստական այցեր
- ԿՈՄԵՆԻՈՒՍ աջակցություն (ԱՍԻՍՏԵՆՏՈՒԹՅՈՒՆ)
- ԿՈՄԵՆԻՈՒՍ աջակցություն (ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԴՊՐՈՑՆԵՐ)
- ԿՈՄԵՆԻՈՒՍ ուսուցիչների և կրթական մնացած անձնակազմի որակավորումը բարձրացնող դասընթացներ (IST)
- ԿՈՄԵՆԻՈՒՍ դպրոցների բազմակողմ գործընկերություններ
- ԿՈՄԵՆԻՈՒՍ դպրոցների երկկողմ գործընկերություններ
- ԿՈՄԵՆԻՈՒՍ Ռեժիո գործընկերություններ
- ԿՈՄԵՆԻՈՒՍ բազմակողմ ծրագրեր
- ԿՈՄԵՆԻՈՒՍ բազմակողմ ցանցեր
- ԿՈՄԵՆԻՈՒՍ լրացուցիչ միջոցառումներ
- էլեկտրոնային Թվիննինգ

ԷՐԱԶՄՈՒՍ

«Էրազմուսը», որ ստեղծվել է 1987թ., հանդիսանում է Եվրոպայում բարձրագույն կրթության ոլորտում շարժունության ու համագործակցության համար կրթության և ուսուցման ԵՄ կարևոր ծրագիրը: Նրա տարբեր գործողությունները նպատակ ունեն բավարարել ոչ միայն արտասահմանում սովորել կամ աշխատել ցանկացող ուսանողների, այլ նաև դասախոսների ու անգամ այն ձեռնարկությունների անձնակազմի կարիքները, որոնք մտադիր են դասավանդել արտասահմանում, ինչպես նաև բարձրագույն կրթության ոլորտում արտասահմանում վերապատրաստվել ցանկացող անձնակազմի կարիքները: Դեռ ավելին, ծրագիրը բարձրագույն ուսումնական հաստատություններին (ԲՈՒՀ) հնարավորություն է տալիս համատեղ աշխատել արագացված ծրագրերի, ակադեմիական ու կառուցվածքային ցանցերի և բազմակողմ ծրագրերի միջոցով, ինչպես նաև դուրս գալ գործարար աշխարհ:

Որո՞նք են նպատակները

Առանձնահատուկ հիմնախնդիրները

- Աջակցել Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի ստեղծմանը.
- Ամրապնդել բարձրագույն ու ժամանակակից մասնագիտական կրթության դերը բարեփոխումների գործընթացում.

Գործառնական հիմնախնդիրներ

- Բարելավել որակն ու մեծացնել ամբողջ Եվրոպայի տարածքում ուսանողների ու դասավանդող անձնակազմի շարժունության ծավալները, որպեսզի մինչև 2012թ. «Էրազմուս» ծրագրի ու նրան նախորդած ծրագրերի շրջանակներում շարժունությանը մասնակցի առնվազը 3 միլիոն ուսանող:
- Բարելավել որակն ու ընդլայնել համագործակցությունը Եվրոպայի բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև:
- Ամրապնդել Եվրոպայում ձեռք բերված բարձրագույն կրթության ու ժամանակակից մասնագիտական կրթության որակավորումների թափանցիկությունն ու մրցունակությունը:
- Բարելավել որակն ու ընդլայնել համագործակցությունը Եվրոպայում բարձրագույն ուսումնական հաստատությունների և ձեռնարկությունների միջև:
- Խթանել նորարարական մոտեցումների զարգացումը բարձրագույն կրթության և ուսուցման մակարդակում, ինչպես նաև դրանց փոխանցումը, այդ թվում՝ մեկ մասնակից երկրից՝ մյուսը:
- Խթանել ցկյանս կրթության համար նորարարական տեղակտվական տեխնոլոգիաների վրա հիմնված բովանդակության, ծառայությունների, մեթոդների ու գործնական կիրառման զարգացումը:

Ո՞վքեր կարող են մասնակցել

- Բարձրագույն կրթության և ուսուցման բոլոր ձևերում ընդգրկված ուսանողներն ու վերապատրաստվողները.
- Բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ ԵՄ անդամ պետությունների և այլ մասնակից երկրների հատկորոշմամբ.
- Այդ հաստատություններում դասավանդողները, վերապատրաստողներն ու մնացած անձնակազմը.

- Միություններն ու բարձրագույն կրթության մեջ ներգրավվածները, ներառյալ՝ համապատասխան ուսանողների, համալսարանների ու դասախոսների/ վերապատրաստողների միությունները.
- Ձեռնարկությունները, սոցիալական գործընկերներն ու աշխատանքային կյանքի մյուս ներկայացուցիչները.
- Տեղական, տարածաշրջանային ու ազգային մակարդակներում կրթության և ուսուցման կազմակերպման ու ապահովման համար պատասխանատու պետական և մասնավոր կազմակերպությունները, ներառյալ՝ շահույթ չհետապնդող ու հասարակական կազմակերպությունները.
- Ցկյանս կրթության հարցերով զբաղվող գիտահետազոտական կենտրոններն ու մարմինները.
- Կողմնորոշման, խորհրդատվական ու տեղեկատվական ծառայություններ մատուցող մարմինները.

Թույլատրելիության առանձնահատուկ կանոններ.

• Ծրագրին մասնակցելու իրավունք ստանալու համար բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է ունենան էրազմուս համալսարանի կանոնադրությունը (EUC): Այնուամենայնիվ, «էրազմուս» ծրագիրը բաց է դերակատարների լայն խմբի համար (ձեռնարկություններ, սոցիալական գործընկերներ, գիտահետազոտական կենտրոններ և այլն), ինչպես սահմանված է ՑԿԾ ստեղծման վերաբերյալ Եվրոպական Խորհրդարանի ու Խորհրդի որոշման հոդված 20-ով: Այդ դերակատարների համար, իհարկե, պարտադիր չէ դիմել էրազմուս համալսարանի կանոնադրության համար, որպեսզի կարողանան կազմակերպել ուսանողների տեղավորումը կամ մասնակցել բազմակողմ ծրագրերում, ցանցերում կամ լրացուցիչ միջոցառումներում:

• Ինչ վերաբերում է «էրազմուս» ուսանողների տեղավորմանը, բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է ունենան էրազմուս համալսարանի ընդլայնված կանոնադրություն (մանրամասների համար տե՛ս EUC-ի վերաբերյալ հատուկ տեղեկատվությունը), իսկ միավորումները պետք է ունենան էրազմուս միավորման տեղավորման վկայական.

• Ուսումնառության ընթացքում միևնույն անձին կարող է տրամադրվել առավելագույնը երեք էրազմուս դրամաշնորհներ. մի դրամաշնորհը՝ ուսումնառության ժամանակահատվածի համար, մեկը՝ տեղավորման, իսկ մյուսը՝ էրազմուս Մունդուս մագիստրոսի դասընթացի մասնակցության համար.

• Շարժունության համար առնվազն ուղարկող կամ հյուրընկալող երկիրը պետք է հանդիսանա ԵՄ անդամ պետություն.

• Միավորման մասնակից կազմակերպություններից առնվազը մեկը պետք է լինի ԵՄ անդամ պետություն:

Գործողության ինչպիսի՞ տեսակներ

- Անհատների շարժունություն[1], որը կարող է ներառել
  - Մեկ այլ մասնակից երկրի բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու նպատակով ուսանողների շարժունությունը («էրազմուս ուսանողներ»)[2]
  - Մեկ այլ մասնակից երկրի ձեռնարկություններում, վերապատրաստման կենտրոններում, գիտահետազոտական կենտրոններում կամ այլ կազմակերպություններում ուսանողների տեղավորման նպատակով ուսանողների շարժունությունը («էրազմուս ուսանողներ»).
  - Բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդող անձնակազմի կամ հրավիրված անձնակազմի շարժունությունը, որի նպատակն է մեկ այլ մասնակից երկրի բարձրագույն ուսումնական հաստատությունում դասավանդման առաքելություն իրականացնելը.

[1] Աջակցություն կարող է տրամադրվել նաև տեղի կամ հյուրընկալող բարձրագույն ուսումնական հաստատություններին կամ ձեռնարկություններին՝ շարժունության բոլոր փուլերում, ներառյալ լեզվի նախապատրաստական ու վերապատրաստման դասընթացներում, որակի ապահովման համար:

[2] 1) բարձրագույն ուսումնական հաստատությունների այն ուսանողները, ովքեր գրանցված լինելով առնվազը երկրորդ կուրսում, ուսումնառության որոշակի ժամանակահատված անցկացնում են մեկ այլ անդամ պետությունում, «էրազմուս» ծրագրի շարժունության գործողության շրջանակներում, անկախ այն հանգամանքից, արդյոք նրանց ծրագրի ներքո ֆինանսական օժանդակություն տրամադրվել է, թե՝ ոչ: Այդ ժամանակահատվածները պետք է լիովին ճանաչվեն ուղարկող և հյուրընկալող հաստատությունների միջև կնքված համաձայնագրերով,
2) Մագիստրոսի համատեղ ծրագրերում գրանցված և շարժունության մեջ ընդգրկված ուսանողները,
3) Տեղավորմամբ զբաղվող բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները:

- բարձրագույն ուսումնական հաստատությունների դասավանդող կամ մնացած անձնակազմի շարժունությունը, որի նպատակն է՝ ապահովել մասնակցությունը մեկ այլ մասնակից երկրում իրականացվող վերապատրաստմանը.
- Լեզվի «էրազմուս» արագացված դասընթացները, որոնք կազմակերպվում են ժամանող ուսանողների համար մասնակից այն երկրներում, որտեղ ավելի քիչ տարածված ու հազվադեպ դասավանդվող լեզուներով են խոսում.
- «էրազմուս» արագացված դասընթացները, որոնք կազմակերպվում են բազմակողմանիության սկզբունքով.

• Բազմակողմ ծրագրեր, որոնց ուշադրության կենտրոնում են նորարարությունը, փորձարկումն ու լավագույն փորձի փոխանակումը՝ առանձնահատուկ ու գործառնական հիմնախնդիրներին առնչվող ոլորտներում: Ծրագրերը պետք է ձգտեն մշակել ու իրականացնել ուսումնական ծրագրեր, բարձրագույն կրթության որոշակի հարցերի արդիականացման համար ռազմավարություններ, ինչպես նաև խթանել բարձրագույն կրթության և ձեռնարկությունների համագործակցությունն ու լուծել ուսանողների վիրտուալ ավանների հետ կապված գլխավոր հարցերը:
• Բարձրագույն ուսումնական հաստատություններից ու այլ կազմակերպություններից կազմված ցանցերը («էրազմուս ցանցերը»), որոնք ներկայացնում են կամ առանձին առարկա, կամ միջառարկայական ոլորտ, նպատակ ունեն՝ զարգացնել կրթության նոր հայեցակարգեր և ունակություններ («Ակադեմիական ցանցեր») կամ լուծել բարձրագույն կրթության կառուցվածքային կամ կառավարման հարցերը՝ նորարարական լուծումներն ու մոտեցումները խթանելու միջոցով («Կառուցվածքային ցանցեր»):
• Նախաձեռնությունները, որոնք, թեև թույլատրելի չեն «էրազմուս» ծրագրի այլ գործողությունների ներքո, ակնհայտորեն կնպաստեն «էրազմուս» ծրագրի հիմնախնդիրների (լրացուցիչ միջոցառումներ) լուծմանը:
• Նախապատրաստական այցերը, որոնք օգնում են կապ հաստատել ապագա գործընկերների հետ՝ ավելի սերտ համագործակցության մեջ մտնելու նպատակով:

Որո՞նք են «էրազմուս» գործողությունները

Նախապայմաններ.
• ԷՐԱԶՄՈՒՍ համալսարանի կանոնադրություն
• ԷՐԱԶՄՈՒՍ միավորման տեղավորման վկայական

Գործողություններ.
- ԷՐԱԶՄՈՒՍ նախապատրաստական այցեր
- ԷՐԱԶՄՈՒՍ շարժունության կազմակերպում
- ԷՐԱԶՄՈՒՍ ուսանողների շարժունություն ուսումնառության նպատակով
- ԷՐԱԶՄՈՒՍ ուսանողների շարժունություն տեղավորման նպատակով
- ԷՐԱԶՄՈՒՍ անձնակազմի շարժունություն. ԲՈՒՀ-երի դասավանդող անձնակազմից ու ձեռնարկություններից հրավիրված անձնակազմի կողմից դասավանդման առաքելություններ
- ԷՐԱԶՄՈՒՍ անձնակազմի շարժունություն. ԲՈՒՀ-երի անձնակզմի վերապատրաստումը ձեռնարկություններում ու ԲՈՒՀ-երում
- ԷՐԱԶՄՈՒՍ լեզվի արագացված դասընթացներ
- ԷՐԱԶՄՈՒՍ արագացված ծրագրեր
- ԷՐԱԶՄՈՒՍ ակադեմիական ցանցեր
- ԷՐԱԶՄՈՒՍ կառուցվածքային ցանցեր
- ԷՐԱԶՄՈՒՍ ուսումնական ծրագրերի մշակման նախագծեր
- ԷՐԱԶՄՈՒՍ լրացուցիչ միջոցառումներ
- ԷՐԱԶՄՈՒՍ ուսանողական վիրտուալ ավաններ
- ԷՐԱԶՄՈՒՍ բարձրագույն կրթության արդիականացում
- ԷՐԱԶՄՈՒՍ համագործակցություն բարձրագույն ուսումնական հաստատությունների ու ձեռնարկությունների միջև:

ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ

Որո՞նք են նպատակները

Առանձնահատուկ հիմնախնդիրներ

- Աջակցել մասնակիցներին վերապատրաստման ու հետագա կատարելագործման գործողություններում գիտելիքներ, հմտություններ և որակավորումներ ձեռք բերելու ու կիրառելու գործում՝ անհատական զարգացումը խթանելու նպատակով:
- Խթանել մասնագիտական կրթության և ուսուցման համակարգերի, հաստատությունների ու գործնական կիրառության որակի և նորարարության բաելավումը:
- Ամրապնդել մասնագիտական կրթության և ուսուցման գրավչությունն ու գործատուների և անհատների շարժունությունը, ինչպես նաև խթանել աշխատող փորձնակների շարժունությունը:

Գործառնական հիմնախնդիրներ

- Բարելավել որակն ու մեծացնել նախնական մասնագիտական կրթության և ուսուցման մեջ ներգրավված և ուսուցումը շարունակող մարդկանց շարժունության ծավալներն ամբողջ Եվրոպայում, որպեսզի ձեռնարկություններում տեղավորվելը մինչև ՑԿԾ-ի ավարտը հասնի տարեկան առնվազը 80.000:
- Բարելավել որակն ու ընդլայնել կրթական հնարավորություններ ապահովող հաստատությունների կամ կազմակերպությունների, սոցիալական գործընկերների և համապատասխան այլ մարմինների միջև համագործակցությունն ամբողջ Եվրոպայի տարածքում:
- Խթանել նորարարական քայլերի զարգացումը մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում, բացի բարձրագույն մակարդակից, ինչպես նաև դրանց փոխանցումը, այդ թվում մեկ մասնակից երկրից՝ մյուսը:
- Բալելավել թափանցիկությունն ու որակավորումների և ունակությունների ճանաչումը, ներառյալ ոչ ֆորմալ ու ինֆորմալ /ներունակ/ կրթության միջոցով ձեռք բերածները:
- Խթանել ժամանակակից օտար լեզուների ուսումնասիրությունը:
- Նպաստել ցկյանս կրթության համար նորարարական տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված բովանդակության, ծառայությունների, դասավանդման մեթոդների ու գործնական կիրառման զարգացմանը:

Ո՞վքեր կարող են մասնակցել

- Մասնագիտական կրթության և ուսուցման մեջ, բացի բարձրագույն կրթությունից, ներգրավված մարդիկ.
- Աշխատաշուկայում ներգրավված մարդիկ.
- «Լոենարդո դա Վինչի» ծրագրում ընդգրկված ոլորտներում կրթական հնարավորություններ ապահովող հաստատություններն ու կազմակերպությունները.
- Այդ հաստատությունների կամ կազմակերպությունների դասախոսները, վերապատրաստողներն ու մնացած անձնակազմը.
- Միություններն ու մասնագիտական կրթության և ուսուցման մեջ ներգրավվածների ներկայացուցիչները.
- Ձեռնարկությունները, սոցիալական գործընկերներն ու աշխատանքային կյանքի այլ ներկայացուցիչներ, ներառյալ առևտրային պալատները և առևտրային այլ կազմակերպություններ.
- Ցկյանս կրթության ցանկացած հարցի հետ կապված կողմնորոշում, խորհրդատվություն ու տեղեկատվական ծառայություններ տրամադրող մարմինները.
- Տեղական, տարածաշրջանային ու ազգային մակարդակներում մասնագիտական կրթության և ուսուցման ցանկացած հարցի հետ կապված համակարգերի ու քաղաքականությունների համար պատասխանատու անձինք և մարմինները.
- Ցկյանս կրթության հարցերով զբաղվող գիտահետազոտական կենտրոններն ու մարմինները.
- Բարձրագույն ուսումնական հաստատությունները.
- Շահույթ չհետապնդող կազմակերպությունները, կամավոր մարմիններն ու հասարակական կազմակերպությունները.

Գործողության ինչպիսի՞ տեսակներ

Հետևյալ գործողություններն օժանդակվում են «Լեոնարդո դա Վինչի» ծրագրի կողմից.

Անհատների շարժունությունը[3] , որը կարող է ներառել.
- Ձեռնարկություններում կամ վերապատրաստման հաստատություններում անդրազգային տեղավորումներ.
- Վերապատրաստողների ու կողմնորոշող խորհրդատուների, վերապատրաստման հաստատությունների ու ձեռնարկությունների ներսում վերապատրաստումների պլանավորման ու մասնագիտական կողմնորոշման համար պատասխանատուների մասնագիտական հետագա զարգացման նպատակով տեղավորումներ ու փոխանակումներ.

- Մասնակից կազմակերպությունների համար փոխադարձ հետաքրքրության թեմաներով զբաղվող գործընկերությունները.
- Բազմակողմ ծրագրերը, հատկապես, նրանք, որոնց նպատակն է՝ բարելավել ուսուցման համակարգերը՝ ուշադրությունը բևեռելով նորարարության փոխանցման վրա, ներառյալ լեզվական, մշակութային ու իրավական համատեքստերում նորարարական արտադրանքների ու գործընթացների համապատասխանեցումն ազգային կարիքներին.
- Բազմակողմ ծրագրերը, որոնց նպատակն է՝ բարելավել ուսուցման համակարգերը՝ ուշադրությունը նորարարության ու լավագույն փորձի վրա բևեռելու միջոցով.
- Մասնագիտական կրթության և ուսուցման հետ կապված առանձնահատուկ հարցերով զբաղվող փորձագետների ու կազմակերպությունների թեմատիկ ցանցերը.
- Շարժունության, գործընկերության, ծրագրային կամ ցանցային գործողություններ իրականացնելու նպատակով ուսումնական ու նախապատրաստական այցեր.
- Այլ նախաձեռնություններ, որոնց նպատակն է՝ «Լեոնարդո դա Վինչի» ծրագրի հիմնախնդիրների խթանումը («Լրացուցիչ միջոցառումներ»):

Ո՞րոնք են «Լեոնարդո դա Վինչի» գործողությունները

Նախապայմաններ

- «Լեոնարդո դա Վինի» շարժունության վկայական

Գործողություններ

- ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ ՆՄԿ (նախնական մասնագիտական կրթություն)
- ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ ՄԱ (մարդիկ աշխատաշուկայում)
- ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ ՄԿՈՒՊՐՈ (ՄԿՈՒ պրոֆեսիոնալներ)
- ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ գործընկերություններ
- ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ նորարարության փոխանցում

[3] Այսպիսի շարժունության կազմակերպումն իրականացնելիս կամ օժանդակելիս, հարկ է ստանձնել նախապատրաստական անհրաժեշտ միջոցառումներ, այդ թվում լեզվի նաապատրաստում, ինչպես նաև պետք է հոգ տանել շարժունության մեջ ներգրավված մարդկանց համապատասխան վերահսկողություն ու աջակցություն ապահովելու համար:

- ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ նորարարության զարգացում
- ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ բազմակողմ ցանցեր
- ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ լրացուցիչ միջոցառումներ

ԳՐՈՒՆԴՎԻԳ

Որո՞նք են նպատակները

Առանձնահատուկ հիմնախնդիրներ

- Արձագանքել Եվրոպայում ծերացող բնակչության կրթական մարտահրավերին.
- Օգնել մեծահասակներին իրենց գիտելիքներն ու ունակությունները բարելավելու ուղիներ գտնել.

Գործառնական հիմնախնդիրներ

- Բարելավել մեծահասկների կրթության մեջ ներգրավված մարդկանց համար Եվրոպայի ողջ տարածքում շարժունության որակն ու մատչելիությունը, մեծացնել ծավալները, որպեսզի մինչև 2013թ. օժանդակվի տարեկան առնվազը 7.000 մարդու շարժունություն:
- Բարելավել որակն ու ընդլայնել ամբողջ Եվրոպայում մեծահասակների կրթության մեջ ներգրավված կազմակերպությունների համագործակցությունը:
- Օժանդակել խոցելի սոցիալական խմբերին ու սոցիալական մարգինալ համատեքստերում մարդկանց, հատկապես, տարեց մարդկանց և առանց նախնական որակավորման կրթությունը կիսատ թողած անձանց՝ մեծահասակների համար կրթություն ստանալու այլընտրական հնարավորություններ ընձեռելու նպատակով:
- Խթանել նորարարական գործողությունների զարգացումը մեծահասակների կրթության ոլորտում, ինչպես նաև դրանց փոխանցումը, այդ թվում՝ մեկ մասնակից երկրից՝ մյուսը:
- Նպաստել ցկյանս կրթության համար նորարարական տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված բովանդակության, ծառայությունների, դասավանդման մեթոդների ու գործնական կիրառման զարգացմանը:
- Բարելավել մանկավարժական մոտեցումներն ու մեծահասակների կրթության կազմակերպությունների կառավարումը:

Ո՞վքեր կարող են մասնակցել

- Մեծահասակ սովորողները
- Մեծահասկաների համար ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ /ներունակ/ կրթության հնարավորություններ ապահովող հաստատություններն ու կազմակերպությունները
- Այդ հաստատությունների կամ կազմակերպությունների դասախոսները և մնացած անձնակազմը
- Կրթության մեծահասակ անձնակազմի նախնական կամ հետագա ուսուցման մեջ ներգրավված հաստատությունները
- Միություններն ու մեծահասակների կրթության մեջ ներգրավվածների ներկայացուցիչները, այդ թվում՝ սովորողների և դասախոսների միությունները
- Մեծահասակների կրթության ցանկացած հարցի հետ կապված կողմնորոշում, խորհրդատություն ու տեղեկատվական ծառայություններ մատուցող մարմինները
- Տեղական, տարածաշրջանային ու ազգային մակարդակներում մեծահասակների կրթության ցանկացած հարցի հետ կապված համակարգերի ու քաղաքականությունների համար պատասխանատու անձինք և մարմինները
- Գիտահետազոտական կենտրոններն ու մեծահասակների կրթության հարցերով զբաղվող մարմինները
- Ձեռնարկությունները
- Շահույթ չհետապնդող կազմակերպությունները, կամավոր մարմինները, հասարակական կազմակերպությունները

- Մեծահասակների կրթությամբ զբաղվող բարձրագույն ուսումնական հաստատությունները

Գործողության ինչպիսի՞ տեսակներ

Հետևյալ գործողություններն օժանդակվում են «Գրունդվիգ» ծրագրի կողմից.

- Անհատների շարժունությունը[4], որի մեջ մտնում են մեծահասակների կրթությամբ զբաղվող անձնակազմի որակավորման բարձրացման դասընթացները, այցերը, ասիստենտությունն ու փոխանակումները, ինչպես նաև մեծահասակ սովորողների համար զանազան հնարավորությունները, այդ թվում՝ մասնակցությունը Գրունդվիգ գործնական հանդիպումներում և սովորողների գործընկերություններում ու Մեծահասակների համար Եվրոպայում «Գրունդվիգ» նախաձեռնության ներքո մեծահասակների կամավորության ծրագրերում ("GIVE"):
- Գործընկերությունները, որոնց ուշադրության թիրախում մասնակից կազմակերպությունների համար փոխադարձ հետաքրքրության թեմաներն են (“Սովորողների գործընկերություններ»):
- Բազմակողմ ծրագրերը, որոնց նպատակն է՝ մեծահասակների կրթության համակարգերի բարելավումը՝ նորարարության ու լավագույն փորձի փոխանցման միջոցով:
- Փորձագետների ու կազմակերպությունների թեմատիկ ցանցերը, որոնք աշխատում են, հատկապես, հետևյալի ուղղությամբ.
  - Մեծահասակների կրթության զարգացումն առարկայական կամ կառավարման այն ոլորտներում, որոնց հետ առնչվում են.
  - Համապատասխան լավագույն փորձի ու նորարարության ճանաչումը, բարելավումն ու հրապարակումը.
  - Մյուսների կողմից ստեղծված ծրագրերի ու գործընկերությունների բովանդակային աջակցության ապահովումը, ինչպես նաև նման ծրագրերի և գործընկերությունների միջև ինտերակտիվության խթանումը.
  - Մեծահասակների կրթության շրջանակներում կարիքների վերլուծության ու որակի վերահսկման զարգացման խթանումը.
- Նախապատրաստական այցերը. շարժունության դրամաշնորհը, որը հաստատության ներկայացուցչին հնարավորություն է ընձեռում մասնակցել կոնտակտային սեմինարին կամ հնարավոր գործընկերների հետ հանդիպմանը.
- Այլ նախաձեռնություններ, որոնց նպատակն է՝ խթանել «Գրունդվիգ» ծրագրի հիմնախնդիրները («Լրացուցիչ միջոցառումներ»):

Որո՞նք են «ԳՐՈՒՆԴՎԻԳ» գործողությունները

- ԳՐՈՒՆԴՎԻԳ նախապատրաստական այցերը
- ԳՐՈՒՆԴՎԻԳ մեծահասակների կրթությամբ զբաղվող անձնակազմի այցերն ու փոխանակումները
- ԳՐՈՒՆԴՎԻԳ ասիստենտությունները
- ԳՐՈՒՆԴՎԻԳ որակավորման բարձրացման դասընթացները մեծահասակների կրթությամբ զբաղվող անձնակազմի համար
- ԳՐՈՒՆԴՎԻԳ գործնական հանդիպումները
- ԳՐՈՒՆԴՎԻԳ սովորողների գործընկերությունները
- ԳՐՈՒՆԴՎԻԳ տարեց կամավորական ծրագրերը
- ԳՐՈՒՆԴՎԻԳ բազմակողմ ցանցերը
- ԳՐՈՒՆԴՎԻԳ բազմակողմ ծրագրերը
- ԳՐՈՒՆԴՎԻԳ լրացուցիչ միջոցառումները

[4] Այդպիսի շարժունության կազմակերպման ու աջակցման համար պետք է ձեռնարկվեն նախապատրաստական անհրաժեշտ միջոցառումներ ու ապահովեն, որպեսզի համարժեք վերահսկողություն ու աջակցություն տրամադրվի շարժունության մեջ ընդգրկված մարդկանց:

ՏՐԱՆՍՎԵՐՍԱԼ ԾՐԱԳԻՐ

Որո՞նք են նպատակները

Առանձնահատուկ հիմնախնդիրներ

- Խթանել եվրոպական համագործակցությունը երկու կամ ավելի ենթածրագրեր ներառող ոլորտներում
- Խթանել անդամ պետությունների կրթության և ուսուցման համակարգերի որակն ու թափանցիկությունը

Գործառնական հիմնախնդիրներ

- Նպաստել ցկյանս կրթության ոլորտում քաղաքականության զարգացմանն ու համագործակցությանը եվրոպական մակարդակում, հատկապես Լիսաբոնյան «Կրթություն և ուսուցում 2010թ.» գործընթացի, ինչպես նաև Բոլոնիայի և Կոպենհագենի գործընթացների ու դրանց հետևողների համատեքստում:
- Ապահովել համեմատական տվյալների, վիճակագրության ու վերլուծությունների բավարար պաշար՝ ամրապնդելու ցկյանս կրթության քաղաքականության զարգացումը, վերահսկելու ցկյանս կրթության հիմնախնդիրների և նպատակների ուղղությամբ առաջընթացը, ինչպես նաև որոշելու առանձնահատուկ ուշադրության արժանի ոլորտները:
- Խթանել լեզուների ուսումնասիրությունը և նպաստել անդամ պետություններում լեզվական բազմազանությանը:
- Նպաստել ցկյանս կրթության համար նորարարական տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված բովանդակության, ծառայությունների, դասավանդման մեթոդների ու գործնական կիրառման զարգացումը:
- Ապահովել, որպեսզի Ցկյանս կրթության ծրագրի արդյունքները պատշաճորեն ճանաչվեն, ցուցադրվեն ու լայնածավալ կիրառություն գտնեն:

Խնդրում ենք հաշվի առնել.

«Տրանսվերսալ ծրագրի» համար թույլատրելիության չափանիշներից մեկն այն է, որ ցանկացած առաջարկ պետք է ներառի երկու կամ ավելի կրթական ոլորտներ:

Եթե առաջարկը ներառում է միայն մեկ ոլորտ, այն պետք է ներկայացվի համապատասխան ոլորտային ենթածրագրին: Եթե, օրինակ, առաջարկի նպատակը լեզվի ուսումնասիրման նյութերի մշակումն է, որոնք պետք է օգտագործվեն դպրոցականների կողմից (թիրախային խումբ), այն պետք է ներկայացվի «Կոմենիուսին»:

Եթե, այնուամենայնիվ, առաջարկը ներառում է երկու կամ ավելի կրթական ոլորտներ, թույլատրվում է այն ներկայացնել «Տրանսվերսալ ծրագրի» ներքո իրականացվող գլխավոր գործողություններից մեկին: Այն դեպքում, երբ առաջարկը ներառում է մեկից ավել կրթական ոլորտներ, իսկ նրա թիրախային խմբերը նույնպես պատկանում են մեկից ավել կրթական ոլորտների, առաջարկը պետք է ներկայացվի «Տրանսվերսալ ծրագրի» գլխավոր գործողություններից մեկին: Միայն մեկից ավել կրթական ոլորտներին ուղղված ծրագրերն են «Տրանսվերսալ ծրագրի» համար թույլատրելի համարվում:

Սույն փաստաթղթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի գտնել հետևյալ կայքէջում.
http://ec.europa.eu/education/policies/2010/et_2010_en.html

ՑԿՅԱՆՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ (ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1)

Գործողության ինչպիսի՞ տեսակներ

Ցկյանս կրթության ոլորտում քաղաքականության վերաբերյալ համագործակցությունն ու նորարարությունը խթանվում են գլխավոր գործողությունների միջոցով.

- Անհատական շարժունություն, այդ թվում՝ ազգային, տարածաշրջանային ու տեղական պատասխանատուների կողմից նշանակված փորձագետների և պաշտոնյաների, ինչպես նաև կրթական ու ուսումնական հաստատությունների տնօրենների համար նախատեսված ուսումնական այցեր, հավատարմագրման գործընթացներում կողմնորոշում և փորձառություն, ինչպես նաև սոցիալական գործընկերների համար.
- Բազմակողմ ծրագրեր, որոնց նպատակն է՝ պատրաստել ու փորձարկել քաղաքականության առաջարկներ, որոնք մշակված են համայնքային մակարդակում, ինչպես նաև նորարարություն ցկյանս կրթության ոլորտում.
- Քաղաքականության հարցերով զբաղվող փորձագետների և/ կամ հաստատությունների բազմակողմ համագործակցության ցանցեր: Այդպիսի ցանցերը կարող են ներառել.

-Թեմատիկ ցանցեր, որոնք զբաղվում են ցկյանս կրթության բովանդակության կամ մեթոդների ու քաղաքականությունների վերաբերյալ հարցերով: Այդպիսի ցանցերը կարող են հետազոտել, փոխանակել, ճանաչել և վերլուծության ենթարկել լավագույն փորձն ու նորարարությունը, ինչպես նաև առաջարկություններ անել անդամ երկրներում նման փորձն ավելի լավ և ավելի լայն կիրառության մեջ դնելու վերաբերյալ:

- Ցկյանս կրթության ոլորտում ռազմավարական վերաբերյալ հարցեր.
- Ցկյանս կրթության ոլորտում քաղաքականությունների ու համակարգերի ուսումնասիրություն և վերլուծություն, որը կարող է ներառել.

- Ուսումնասիրություններ ու համեմատական հետազոտություն
- Ցուցիչների ու վիճակագրական ուսումնասիրությունների մշակում, այդ թվում՝ աջակցություն ցկյանս կրթության ոլորտում ձեռնարկված աշխատանքներում՝ համագործակցելով «Eurostat»-ի հետ.

- Աջակցություն «Eurydice» ցանցի գործառնությանը և Հանձնաժողովի կողմից ստեղծված «Eurydice» եվրոպական միավորի ֆինանսավորում.

- Որակավորումների և ունակությունների, որոնք ձեռք են բերվել ոչ ֆորմալ ու ինֆորմալ կրթության միջոցով, ճանաչման և թափանցիկության նպաստման գործողությունը, սովորելու նպատակով շարժունության վերաբերյալ տեղեկատվությունն ու կողմնորոշումը, ինչպես նաև որակի ապահովման գործում համագործակցությունը, որը կարող է ներառել.

-Այն կազմակերպությունների ցանցերը, որոնք խթանում են շարժունությունն ու ճանաչումը, ինչպիսիք են՝ «Euroguidance» և Ազգային ակադեմիական ճանաչման տեղեկատվական կենտրոնները (NARIC-ներ).

- Աջակցություն անդրազգային ինտերնետային ծառայություններին, օրինակ՝ «Ploteus»-ը.
- «Europass» նախաձեռնության շրջանակներում գործողություններ՝ Եվրոպական Խորհրդարանի ու Խորհրդի 2241/2004 որոշման համաձայն, որը փորձում է ստեղծել համընդհանուր շրջանակ՝ որակավորումների և ունակությունների թափանցիկության ապահովման համար.

- Այլ նախաձեռնություններ («Լրացուցիչ միջոցառումներ»), ներառյալ զույգային ուսուցման գործողությունները, որոնց նպատակն է՝ խթանել գլխավոր գործողության հիմնախնդիրները.

«Ցկյանս կրթության ոլորտում քաղաքականության վերաբերյալ համագործակցության ու նորարարության» գլխավոր գործողության այս գործողություններից մի քանիսն ուղղված են առանձին մարմիններին,

հաստատություններին կամ կազմակերպություններին, և չեն մտնում առաջարկների համար ընդհանուր հայտարարության մեջ: Դրանց համար հարկավոր են առաջարկների առանձին հրավերքներ կամ նախապատրաստական այլ քայլեր, որոնք ուղղված են թիրախային տվյալ խմբին:

Ցկյանս կրթության գործողություններում քաղաքականության վերաբերյալ համագործակցությունն ու նորարարությունը.

- ԳԳ1 Կրթության ու մասնագիտական ուսուցման մասնագետների ուսումնական այցեր.
- ԳԳ1 ուսումնասիրություններ ու համեմատական հետազոտություն

ԼԵԶՈՒՆԵՐ (ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2)

Գործողության ինպիսի՞ տեսակներ

Հետևյալ գործողությունները, որոնք ուղղված են մեկից ավել ենթածրագրային ոլորտների հետ առնչվող դասավանդման ու ուսումնառության կարիքներին, կարող են աջակցություն ստանալ լեզուների ուսումնասիրման գլխավոր գործողության ներքո.

- Բազմակողմ ծրագրեր, որոնք ունեն հետևյալ նպատակները.
- Լեզվական գիտակցության ու լեզուների ուսումնասիրման նյութերի մատչելիության խթանում.
- Լեզվի ուսումնասիրման նոր նյութերի մշակում, այդ թվում՝ համացանցային դասընթացներ ու լեզվի իմացության ստուգում.
- Ցանցեր լեզվի ուսումնասիրման ու լեզվական բազմազանության ոլորտում.
- Այլ նախաձեռնություններ, որոնք համահունչ են գլխավոր գործողության հիմնախնդիրներին, ներառյալ՝ տեղեկատվական ու գործնական համաժողովներն ու միջոցառումները, որոնք համադրում են ծրագրերն ու հնարավորությունները («Լրացուցիչ միջոցառումներ»):

Որո՞նք են լեզվի հետ կապված գործողությունները

- ԳԳ2 Նոր նյութեր / համացանցային դասընթացներ / գիտակցության ամրապնդում.
- ԳԳ2 Բազմակողմ ցանցեր.
- ԳԳ2 Լրացուցիչ միջոցառումներ.

ՑԿՅԱՆՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ (ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3)

Գործողության ինպիսի՞ տեսակներ

Հետևյալ գործողությունները, որոնք ուղղված են մեկից ավել ենթածրագրային ոլորտներում դասավանդողների ու սովորողների կարիքներին, աջակցություն են ստանում ՏՏ գլխավոր գործողության ներքո.

- Բազմակողմ ծրագրեր, որոնց նպատակն է՝ խթանել ՏՏ-ով ապահովված կրթությունը, որը ներառված է կրթության երկարաժամկետ ռազմավարություններում, ինչպես նաև զարգացնել և տարածել նորարարական մեթոդները, բովանդակությունները, ծառայություններն ու միջավայրերը.
- Ցանցեր, որոնց նպատակն է գիտելիքների, փորձառության ու լավագույն փորձի փոխանակումը:

Որո՞նք են ՏՏ գործողությունները

- ԳԳ3 Բազմակողմ ծրագրեր.
- ԳԳ3 Բազմակողմ ցանցեր.

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ՈՒ ԿԻՐԱՌՈՒՄ, ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ (Գլխավոր գործողություն 4)

Որո՞նք են նպատակները

«Արդյունքների հրապարակումն ու կիրառումը» գլխավոր գործողություն 4-ի ներքո իրականացվող գործողությունների գլխավոր հիմնախնդիրն է՝ օգնել ստեղծել շրջանակ ոլորտային, տարածաշրջանային, ազգային ու եվրոպական մակարդակներում Ցկյանս կրթության և նախորդ ծրագրերի արդյունքների արդյունավետ կիրառման համար:

Գործողության ինչ՞ տեսակներ

Հատկյալ գործողությունները, որոնց նպատակն է՝ ստեղծել շրջանակ ոլորտային, տարածաշրջանային, ազգային ու եվրոպական մակարդակներում Ցկյանս կրթության և նախորդ ծրագրերի արդյունքների արդյունավետ կիրառման համար, առաջարկվել են արդյունքների հրապարակման ու կիրառման գլխավոր գործողության ներքո.

- Միակողմ ու ազգային ծրագրեր.
- Բազմակողմ ծրագրեր, որոնց նպատակն է՝
  - համապատասպան շրջանակի մշակում (վերլուծություն, մեխանիզմներ, մեթոդներ ու գործնական գործիքներ), որի նպատակն է՝ խթանել ծրագրի ու նախագծի արդյունքների կիրառումը.
  - միջծրագրային գործողություններ, որոնք խթանում են արդյունքների կիրառումը եվրոպական մակարդակում (ըստ ոլորտների, թեմաների, օգտագործողների խմբի…), ինչպես նաև
  - տարածաշրջանային/ եվրոպական/ ոլորտային ցանցերի միջոցով «կիրառման» գործողությունների խթանումը, որի նպատակն է՝ խթանել քաղաքականության մշակման ու գործնական կիրառման համապատասխան շրջափուլը:
    - տեղեկատվական նյութերի ստեղծումը, որոնց մեջ կարող են մտնել համապատասխան վիճակագրական տվյալների հավաքածուն, ինչպես նաև հրապարակման ոլորտի ուսումնասիրությունները, արդյունքների կիրառումն ու լավագույն փորձի փոխանակումը:

ԳԳ4-ի ներքո իրականացվող գործողությունները որքանո՞վ են համապատասխանում ՑԿԾ-ի հրապարկման ու կիրառման գործողություններին

Այդ գլխավոր գործողության ներքո ֆինանսավորվող գործողությունները նպատակ ունեն լրացնել և նպաստել որոշակի ծրագրային արդյունքների հրապարկմանն ու կիրառմանը, որոնք ներառված են ոլորտային չորս ծրագրերի և «տրանսվերսալ» մյուս գլխավոր գործողությունների մեջ, ինչպես նաև ոլորտային չորս ծրագրերի ու Գլխավոր գործողություն 2 լեզուների շրջանակներում լրացուցիչ միջոցառումների ներքո ֆինանսավորվող գործողություններին: Ուստի, այդ գլխավոր գործողության ներքո ֆինանսավորվող ծրագրերը պետք է ուշադրությունը բևեռեն համակարգերի և մեխանիզմների ստեղծման վրա, որոնց նպատակն է՝ նպաստել արդյունքների հրապարակմանն ու կիրառմանը, ինչպես նաև խթանել ԵՄ մակարդակում կիրառման գործողությունների իրականացումը:

Որո՞նք են հրապարակման ու կիրառման գործողությունները

- ԳԳ4 բազմակողմ ծրագրեր.
- ԳԳ4 ուսումնասիրություններն ու տեղեկատվական նյութեր.

«ԺԱՆ ՄՈՆԵ» ԾՐԱԳԻՐ

Որո՞նք են նպատակները

Առանձնահատուկ հիմնախնդիրներ

- Խթանել դասավանդման, գիտահետազոտական ու գործնական կիրառության գործողությունները եվրոպական ինտեգրման ուսումնասիրությունների ոլորտում.
- Նպաստել եվրոպական ինտեգրման, կրթության ու ուսուցման եվրոպական հնարավորությունների հետ կապված հարցերով զբաղվող հաստատությունների ու միությունների համապատասխան բազմազանության գոյությանը.

Գործառնական հիմնախնդիրներ

- Խթանել Համայնքի սահմաններում ու նրանից դուրս բարձրագույն ուսումնական հաստատություններում եվրոպական ինտեգրման ուսումնասիրությունների ոլորտում դասավանդման, գիտական հետազոտության և գործնական կիրառության կատարելությունը.
- Ամրապնդել ակադեմիական ոլորտի մասնագետների և ընդհանրապես Եվրոպայի քաղաքացիների եվրոպական ինտեգրման հարցերի վերաբերյալ գիտելիքներն ու տեղեկացվածությունը.
- Աջակցել եվրոպական գլխավոր հաստատություններին եվրոպական ինտեգրման վերաբերյալ հարցերում.
- Նպաստել կրթության և ուսուցման ոլորտներում ակտիվություն ցուցաբերող բարձրորակ եվրոպական միությունների ու հաստատությունների գոյությունը.

Ովքե՞ր կարող են մասնակցել

- Համայնքի սահմաններում ու նրանից դուրս բարձրագույն ուսումնական հաստատությունները, որոնք ճանաչված են իրենց սեփական երկրներում.
- Պրոֆեսորների ու գիտնականների միությունները, որոնք զբաղվում են Համայնքի սահմաններում և նրանից դուրս եվրոպական ինտեգրման գործընթացով.
- Կրթության և ուսուցման եվրոպական մակարդակում ակտիվություն ցուցաբերող եվրոպական միությունները.

Գործողության ինչպիսի՞ տեսակներ

Հետևյալ գործողություններն օժանդակվում են «Ժան Մոնե» ծրագրի կողմից.

Գլխավոր գործողություն 1. Ամբողջ աշխարհի բարձրագույն ուսումնական հաստատությունների մակարդակում եվրոպական ինտեգրման վերաբերյալ դասավանդման, գիտական հետազոտության ու արտացոլման աջակցություն («Ժան Մոնե» գործողություն).

Միակողմ ծրագրեր, որոնք կարող են ներառել.

-«Ժան Մոնե» ամբիոնները, կատարելագործման ու դասավանդման մոդուլների կենտրոնները.

-Պրոֆեսորների, բարձրագույն կրթության մյուս դասախոսների, եվրոպական ինտեգրման ոլորտում մասնագիտացած գիտնականների միությունները.

- Աջակցություն մեկ այլ երկրի հյուրընկալող համալսարանում իրենց հետազոտությունները խորացնող գիտնականներին (2009թ.-ից հետո).
- Համայնքի հետ կապված տեղեկատվական և գիտահետազոտական միջոցառումներ, որոնց նպատակն է՝ խթանել եվրոպական ինտեգրման վերաբերյալ քննարկումները, արտացոլումն ու գիտելիքները.
    - Բազմակողմ ծրագրեր ու ցանցեր, որոնք կարող են ներառել աջակցություն եվրոպական ինտեգրման ոլորտում բազմակողմ գիտահետազոտական խմբերի ստեղծմանը.

Գլխավոր գործողություն 2. Գործառնական դրամաշնորհներ, որոնց նպատակն է՝ օժանդակել եվրոպական շահերից բխող նպատակներ հետապնդող հետևյալ հաստատությունների գործառնական ու կառավարման ծախսերը.

- Եվրոպայի քոլեջ (Բրուգս և Նատոլին ուսանողական ավաններ)
- Եվրոպական համալսարանի ինստիտուտ (Ֆլորենցիա)
- Հանրային կառավարման եվրոպական ինստիտուտ (Մաստրիխ)
- Եվրոպական օրենքի ակադեմիա (Թրիեր)
- Հատուկ կարիքների կրթության զարգացման եվրոպական գործակալություն (Օդենս)
- Եվրոպական ուսուցման միջազգային կենտրոն – CIFE (Նիցա)

Գլխավոր գործողություն 3. Գործառնական դրամաշնորհներ, որոնց նպատակն է՝ օժանդակել կրթության և ուսուցման ոլորտում ակտիվություն ցուցաբերող եվրոպական միությունների գործառնական ու կառավարման ծախսերը: Այդ շահառուներն ընտրվում են առաջարկների համար առանձին հրավերքի համաձայն:

Որո՞նք են «Ժան Մոնե» գործողությունները

- ԺԱՆ ՄՈՆԵ ամբիոնները
- ԺԱՆ ՄՈՆԵ Ad Personam ամբիոնները
- ԺԱՆ ՄՈՆԵ կատարելագործման կենտրոնները
- ԺԱՆ ՄՈՆԵ դասավանդման մոդուլները
- ԺԱՆ ՄՈՆԵ տեղեկատվական ու գիտահետազոտական գործողությունները
- ԺԱՆ ՄՈՆԵ եվրոպական ինտեգրման ոլորտում մասնագիտացած պրոֆեսորների ու գիտնականների միություններ
- ԺԱՆ ՄՈՆԵ բազմակողմ գիտահետազոտական խմբեր
- ԺԱՆ ՄՈՆԵ կրթության ու ուսուցման ոլորտում ակտիվություն ցուցաբերող եվրոպական միություններ

Ծանոթացավ և խմբագրեց՝ ԳԱԳԻԿ ՊԱՐՈՒՅՐԻ ՄԿՐՏՉՅԱՆԸ: 13.07.2009 թ.